«Քո հաջողակ վճարումը» անվանումով գովազդային վիճակախաղի կանոններ

«Քո հաջողակ վճարումը» անվանումով գովազդային վիճակախաղի կանոններ

1. Ներածություն

1.1. «ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպիչ կամ Ընկերություն) կազմակերպում է «Քո հաջողակ վճարումը» անվանումով գովազդային վիճակախաղ՝ Ընկերության գովազդային քաղաքականության շրջանակներում՝ Ընկերության «Telcell Wallet» բջջային հավելվածով մատուցվող ծառայությունները գովազդելու նպատակով:

1.2. Գովազդային վիճակախաղի կանոններ սահմանող սույն փաստաթուղթը (այսուհետ՝ Կանոններ) հանդիսանում է հրապարակային առաջարկ (օֆերտա)՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 451-րդ հոդվածի և 453-րդ հոդվածի 2-րդ մասի տրամաբանությամբ:

Հիմնական հասկացություններ.

1.3. **Կազմակերպիչ՝** Սույն կանոններով սահմանված գովազդային վիճակախաղի կազմակերպիչն է «ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲԸ-ն:

1.4. **Մասնակից՝** «Telcell Wallet» բջջային հավելվածի այն օգտատերերը, որոնք համապատասխանում են սույն կանոնների պայմաններին: Գովազդային վիճակախաղին մասնակցելու իրավունք չունեն Կազմակերպչի հետ գովազդային վիճակախաղի անցկացման պահին աշխատանքային հարաբերությունների մեջ գտնվող անձինք, ինչպես նաև այն անձինք, որոնց հետ աշխատանքային հարաբերությունները դադարեցվել են գովազդային վիճակախաղի անցկացմանը նախորդող երեք տարիների ընթացքում:

1.5. **Գովազդային վիճակախաղ՝** հաղթողները որոշվում են պատահականության սկզբունքով:

2. Ընդհանուր դրույթներ

2.1. «Telcell Wallet» բջջային հավելվածի օգտատերերի համար իրականացվող Գովազդային վիճակախաղի վերաբերյալ ողջ տեղեկատվությունը տրամադրվում է https://www.telcell.am/ կայքում:

2.2. Մասնակցելով Գովազդային վիճակախաղին՝ մասնակիցն անվերապահորեն ընդունում է Կանոններով սահմանված պայմանները և դրույթները:

2.3. Կանոններին վերաբերող ցանկացած որոշում համարվում է վերջնական և անվիճարկելի:

2.4. Կազմակերպիչն իրավունք ունի ցանկացած պահի փոփոխություն կատարել Կանոններում, որի վերաբերյալ համապատասխան տեղեկատվությունը կտեղադրվի Գովազդային վիճակախաղի 2.1 կետում նշված հարթակում:

2.5. Գովազդային վիճակախաղի շրջանակում նվերները տրամադրվում են առանց որևէ հարկային պարտավորության: Հարկային պարտավորությունների կատարումը ստանձնում է Կազմակերպիչը:
2.6. Գովազդային վիճակախաղին մասնակցության համար որևէ վճար չի գանձվում:
2.7. Գովազդային վիճակախաղի շրջանակում յուրաքանչյուր հաղթող Մասնակցի Կանոններով սահմանված կարգով Նվերը կտրամադրվի:
2.8. Նվերը ենթակա չէ փոխարինման կամ փոխանակման գումարի հետ:
2.9. Կազմակերպիչը պատասխանատվություն չի կրում տրամադրված Նվերի որակի համար:
2.10. Գովազդային վիճակախաղի հաղթողները տալիս են իրենց անվերապահ համաձայնությունը՝ նվերի հանձնման ընթացքում իրականացնելու տեսանկարահանում, ձայնագրում, լուսանկարահանում և ստացված նյութերը մարքեթինգային/գովազդային նպատակներով հավաքագրելու, պահպանելու և տարածելու համար: Սույն պահանջից հրաժարվելու դեպքում նվերը ենթակա չէ հանձնման հաղթողին:
2.11. Կանոններով նախատեսված ցանկացած հիմքով չտրամադրված նվերը մնում է Ընկերության տնօրինման ներքո:
2.12. Կազմակերպչի կողմից զեղծարար վճարման վերաբերյալ հիմնավոր կասկած ունենալու պարագայում օգտատիրոջ մասնակցությունը կարող է անվավեր ճանաչվել՝ առանց հավելյալ ծանուցման: Զեղծարար վճարման չափանիշները սահմանվում և որոշվում են Կազմակերպչի կողմից:

3. «Քո հաջողակ վճարումը» անվանումով գովազդային վիճակախաղի մասնակցության, կտրոնների հաշվարկման և անցկացման կարգը

3.1. «Քո հաջողակ վճարումը» անվանումով Գովազդային վիճակախաղին մասնակցելու իրավունք են ստանում «Telcell Wallet» բջջային հավելվածի բոլոր այն օգտատերերը, ովքեր 2026 թվականի նոյեմբերի 04-ից մինչև 2026 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ ժամանակահատվածում կատարում են Կանոնների 3.1.1 կետում սահմանված գործողությունները:
3.1.1. Գովազդային վիճակախաղի մասնակցության պայմանները.

- Գովազդային վիճակախաղին կարող են մասնակցել «Telcell Wallet» բջջային հավելվածի բոլոր այն օգտատերերը, ովքեր Գովազդային վիճակախաղի անցկացման ժամանակահատվածում միաժամանակ բավարարում են հետևյալ պայմաններին՝
    - հանդիսանում են Telcell քոբրենդային Visa թվային քարտապան (ունեն գործող/ակտիվ քարտ),
    - «Telcell Wallet» բջջային հավելվածի միջոցով «ՌԵԼ-ՍԵԼ» ԲԲԸ-ի հետ համագործակցող գործընկերների վաճառքի և/կամ սպասարկման կետերում (QR կոդով) կամ էլեկտրոնային առևտրի (E-commerce) հարթակներում՝ «Telcell Wallet» բջջային հավելվածում հասանելի վճարման ցանկացած եղանակով (վճարային գործիքով) կատարել են առնվազն 10,000 (տասը հազար) ՀՀ դրամ

կազմող առանձին վճարումներ, որոնցից յուրաքանչյուրը տալիս է Խաղարկության կտրոն(ներ) ստանալու իրավունք՝ սույն Կանոններով սահմանված կարգով:

3.1.2. Կտրոնների հաշվարկման և տրամադրման պայմանները.

- Գործարքները հանրագումարային սկզբունքով չեն միավորվում: Մինչև 9,999 (ինը հազար ինը հարյուր իննսունինը) ՀՀ դրամը ներառյալ կատարված առանձին գործարքները հաշվարկին չեն մասնակցում և կտրոնի ձևավորման հիմք չեն հանդիսանում:
- Կտրոնները տրամադրվում են գործարքի միայն ամբողջական 10,000 ՀՀ դրամի չափով՝ հետևյալ սկզբունքով.
  - «Telcell Wallet» բջջային հավելվածի միջոցով կատարված ստանդարտ QR և E-commerce գործարքների դեպքում՝ յուրաքանչյուր ամբողջական 10,000 ՀՀ դրամի դիմաց տրամադրվում է 1 (մեկ) կտրոն,
  - PartPay եղանակով վճարումների դեպքում՝ յուրաքանչյուր ամբողջական 10,000 ՀՀ դրամի դիմաց տրամադրվում է 2 (երկու) կտրոն:
- Գործարքի ամբողջական կամ մասնակի չեղարկման (վերադարձի/refund) դեպքում տվյալ գործարքի դիմաց տրամադրված կտրոնները ավտոմատ կերպով չեղարկվում են (զրոյացվում են):
- Ձևավորված կտրոններն ավտոմատ արտացոլվում են «Telcell Wallet» բջջային հավելվածի BON (Բոն Մարքեթի) բաժնի «Իմ ապրանքները» ենթաբաժնում:

3.2. **Վիճակախաղի անցկացման կարգը.**

3.2.1. Խաղարկվում է ընդհանուր 9 (ինը) նվեր, որոնց ամբողջական ցանկը սահմանված է սույն Կանոնների 3.3.1 կետում:

3.2.2. Հաղթողները որոշվում են Կանոնների 3.1.1 կետի պահանջներին բավարարող և առնվազն 30 (երեսուն) կտրոն կուտակած Մասնակիցների միջև՝ պատահական ընտրության սկզբունքով: 30 (երեսուն) կտրոնից պակաս կուտակած անձինք նվերների խաղարկությանը չեն մասնակցում:

3.2.3. Միևնույն մասնակիցը կարող է հաղթել միայն մեկ մրցանակ: Եթե պատահական ընտրությամբ տվյալ մասնակցի մեկ այլ կտրոն կրկին շահում է, այդ կտրոնը համարվում է անվավեր, և տվյալ նվերի համար անցկացվում է նոր խաղարկություն:

3.2.4. Վիճակախաղի արդյունքների վերաբերյալ Մասնակիցները տեղեկացվում են մինչև 2027 թվականի հունվարի 08-ը ներառյալ:

3.3. **Մրցանակային ֆոնդը և նվերների հանձնման կարգը.**

3.3.1. Մրցանակային ֆոնդը բաղկացած է 9 (ինը) նվերից՝ յուրաքանչյուրից 1-ական հատ քանակով, որոնք խաղարկվում են ըստ կուտակած կտրոնների հետևյալ խմբերի.

- 1-ին խումբ (150 և ավելի կտրոն կուտակած Մասնակիցների համար)՝
  1. Սմարթֆոն Apple iPhone 18 Pro Burgundy (256 GB)
  2. Սմարթֆոն Samsung Galaxy S26 Ultra (256 GB)
  3. Ռոբոտ-փոշեկուլ Dreame L40s Pro Ultra

- 2-րդ խումբ (50-ից մինչև 149 կտրոն կուտակած Մասնակիցների համար)՝
    4. Ականջակալ Apple AirPods Max 2
    5. Խաղային կցորդ Sony PlayStation 5 Slim Digital Edition
    6. Վարսահարդարիչ Dyson Supersonic HD08
    7. Սմարթ ժամացույց Apple Watch Series 12
- 3-րդ խումբ (30-ից մինչև 49 կտրոն կուտակած Մասնակիցների համար)՝
    8. Ականջակալ Apple AirPods 5
    9. Օդային տապակիչ (աէրոգրիլ) Philips Airfryer NA230/00

3.3.2. Սույն Կանոններով սահմանված մրցանակների խաղարկությանը մասնակցելու համար անհրաժեշտ կտրոնների նվազագույն քանակը կազմում է 30 (երեսուն) կտրոն: Վիճակախաղի ողջ ընթացքում 1-ից մինչև 29 (ներառյալ) կտրոն կուտակած Մասնակիցները որևէ խմբի մրցանակի խաղարկությանը չեն մասնակցում:

3.3.3. Յուրաքանչյուր Մասնակից մասնակցում է այն խմբի խաղարկությանը, որի շեմին համապատասխանում է իր կուտակած կտրոնների ընդհանուր քանակը:

3.3.4. Հաղթող մասնակիցն իրավունք ունի գրավոր դիմումի համաձայն հրաժարվել նվերից կամ այն փոխանցել երրորդ անձի:

3.3.5. Խաղարկության ավարտից հետո հաղթող ճանաչված մասնակիցները ծանուցվում են «Telcell Wallet» բջջային հավելվածում գրանցված իրենց կոնտակտային տվյալների միջոցով՝ էլեկտրոնային փոստի (E-mail) և/կամ push-ծանուցման և/կամ հեռախոսազանգի եղանակով:

3.3.6. Եթե ծանուցումն ուղարկելուց կամ հեռախոսազանգից հետո 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում հաղթող մասնակցի հետ հնարավոր չի լինում կապ հաստատել, կամ մասնակիցը հետադարձ կապ չի հաստատում Ընկերության հետ, վերջինս զրկվում է նվերը ստանալու իրավունքից: Այդ դեպքում տվյալ նվերի համար իրականացվում է նոր ընտրություն՝ պատահականության սկզբունքով ընտրելով այլ հաղթողի:

3.3.7. Հաղթող Մասնակիցը պարտավորվում է ծանուցումը ստանալուց հետո 30 (երեսուն) օրացուցային օրվա ընթացքում անձամբ ներկայանալ Ընկերության գլխամասային գրասենյակ՝ ներկայացնելով իր անձը հաստատող վավեր փաստաթուղթ:

3.3.8. Նվերը ստանալիս հաղթողը ստորագրում է նվերի ստացումը հավաստող փաստաթուղթ (այսուհետ՝ Ստացական): Ստացականի ստորագրմամբ հաղթողը հավաստում է, որ Նվերը ստացել է ամբողջական և պատշաճ տեսքով, և դրա հետ կապված Կազմակերպչի նկատմամբ որևէ պահանջ կամ բողոք չունի:

«ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲԸ մասին լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք այցելել https://telcell.am/ կայք կամ զանգահարել +374 60 272222, +374 60 272223 հեռախոսահամարներով:

«ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲԸ-ն վերահսկվում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից: